

## Մարիամ Հակոբյան

### ՀԱՅ ԵՎ ԲՈՒԼՂԱՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՁԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

**Բանալի բառեր** - Բուլղարիա, բուլղար-մակեդոնացի հեղափոխականներ, հայ-բուլղարական զինակցություն, զենք ու զինամթերք, դրամական հանգանակություն, Ռոստոմ, զինավարժություն, Չինվորական գաղտնի դպրոց:

19-րդ դարավերջը և 20-րդ դարասկիզբը հայ ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջան էր: Ազատագրական պայքարի գլուխ կանգնած ազգային կուսակցությունները, գիտակցելով զինական պայքարում դաշնակիցներ ունենալու կարևորությունը, որոշակի քայլեր ձեռնարկեցին այս հարցին լուծում տալու համար: Օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով հնարավոր չեղավ դաշնակիցներ գտնել Արևմտյան Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների շրջանում: Հայոց ազատամարտը ղեկավարող ուժերը հարկադրված եղան դաշնակիցներ որոնել Արևմտյան Հայաստանից դուրս՝ Օսմանյան կայսրության դեմ պայքարող այլ ժողովուրդների մեջ<sup>1</sup>:

Հնարավոր դաշնակիցների ցուցակում առաջիններից մեկը Բուլղարիան էր, որը թոթափելով օսմանյան լուծը՝ շարունակում էր պայքարել դեռևս նույն լծի տակ գտնվող Մակեդոնիայի համար: Երկու ժողովուրդների ազատագրական ուժերի համագործակցության դաշտի առկայությունը մեծապես պայմանավորված էր այն իրողությամբ, որ այդ ժողովուրդներն ունեցել են նույնանման ճակատագիր: Օսմանյան բարբարոսական ռեժիմը, ճնշումներն ու հալածանքը նրանց պատմության անբաժան մասն են հանդիսացել:

1890-ականների կեսերից հայոց ազատամարտի առաջատար ՀՅԴ-ի կողմից Կ. Պոլսում կազմակերպված ձեռնարկումները որոշակիորեն կապված էին բուլղար-մակեդոնական հեղափոխական կազմակերպությունների համագործակցությանը: Բուլղար ժողովրդի ազատագրական պայքարի ազդեցությունը հայոց ազատամարտի վրա դրսևորվեց ոչ միայն քարոզչության ոլորտում, այլև ազատագրական պայքարի որոշակի ձևերի կիրառումով<sup>2</sup>:

ՀՅԴ-ի կողմից Բուլղարիան հեղափոխական գործունեության կենտրոն ընտրելը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

<sup>1</sup> Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ-բուլղարական զինական համագործակցությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան, գիտաժողովի զեկույցների ժողովածու (այսուհետ՝ Հայ-բուլղարական զինական համագործակցությունը...), Երևան, 2009, էջ 34:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 35:

1. Բուլղարիան ուներ բարենպաստ աշխարհագրական դիրք և կարող էր խարսխ հանդիսանալ հատկապես Կ. Պոլսում հեղափոխական գուրծունեություն ծավալելու համար:

2. Առկա էր բուլղարահայ երիտասարդության մեծ հակումը հայոց ազատամարտի և ազգային դատի խնդիրների նկատմամբ:

3. Ակնհայտ էր հետաքրքրությունը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարուստ փորձի նկատմամբ<sup>1</sup>:

Չպետք է անտեսել, որ հայկական և մակեդոնական հարցերը միջազգայնացվելով՝ Բեռլինի վեհաժողովում գրեթե համընթաց էին քննարկվում: Հայ և բուլղար ժողովուրդների անմիջական հարևաններ չլինելը բացառում էր համագործակցությունը բուն Արևմտյան Հայաստանի տարածքում: Հայ հեղափոխականների համար Բուլղարիան Կ. Պոլիս տանող դուռ էր<sup>2</sup>, իսկ 1895 թ. սկսած՝ գտնվում էր ՀՀԴ-ի ուշադրության կենտրոնում<sup>3</sup>: 1895 թ. վերջից մինչև 1898 թ. սկիզբը ՀՀԴ-ի կողմից կիրառվող «զուգակցված հարվածների» մարտավարության շրջանում հայ-բուլղարական համագործակցությունն ամուր հիմքերի վրա դրվեց:

Հայ և բուլղար ազատագրական ուժերի հարաբերությունները զարգացել են երեք փուլով. 1. 1895 թ. կեսեր-1896 թ. սկիզբ՝ հարաբերությունների ձևավորման փուլ: 2. 1896 թ. փետրվար-1898 թ.՝ համագործակցության կայունացման փուլ: 3. 1898-1907 թթ՝ հարաբերությունների զարգացման փուլ:

Առաջին երկու շրջափուլերում համագործակցությունը սահմանափակվում էր ՀՀԴ Կ. Պոլսի կառույցին զինամթերք մատակարարելու և Կ. Պոլսում համատեղ խոշոր միջոցառում կազմակերպելու շրջանակներում: Վերջին շրջափուլում այն ավելի բազմաբնույթ և տարողունակ է դառնում: Բուլղարիայի մի շարք քաղաքներում ստեղծվում են տարբեր հաստատություններ, իրագործվում համատեղ ձեռնարկներ: Ըստ որում, համագործակցությունն ընդգրկում է նաև ռազմակրթական ոլորտը:

1895 թ. Բուլղարիայի գրեթե բոլոր քաղաքներում առկա էր հայ տարրը: Աբդուլ-համիդյան կոտորածներից մազապուրծ հայության մի հատված հաստատվեց այնտեղ: 1896 թ. դրությամբ Ռուսչուկ քաղաքում հաստատվել էին շուրջ 2000, Վառնայում, Շումլայում՝ համապատասխանաբար 6000 և 2000 փախստականներ<sup>4</sup>:

Բուլղարիա այցելած առաջին դաշնակցական գործիչը Գարեգին Խաժակն (Բաբա-Գասպար) էր: Նա 1894 թ. վերջին հաստատվել է Յամբոլ քաղաքում, որը չնայած հայաշատ չէր, բայց ուներ «Դրոշակ» ընթերցող ու գաղափարական մտավորականներ, որոնք կապ էին պահպանում խմբագրության հետ: Գարեգին Խաժակի ջանքերով կազմակերպվում է Յամբոլի և Սլիվենի «Ընկերություն» անունը կրող 7 հոգուց բաղկացած մարմինը: Վերջինս հանգանակություն կազմակերպելու նպատակով համակիրներ է գտնում նաև Ֆիլիպետում (այժմ՝Պլովդիվ)<sup>5</sup>:

<sup>1</sup>Տե՛ս Մազմանեան Վ., Յուշեր յեղափոխական անցեալէն, «Հայրենիք» ամսագիր, 1937, № 5, մարտ, էջ 149-150:

<sup>2</sup>Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդի. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 56:

<sup>3</sup>Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Երևան, 2002, էջ 8:

<sup>4</sup>Տե՛ս Հայրունի Ա., Յոհաննէս Լեւիսիոսի առաքելությունը (1894-1915թթ.), Երևան, 2002, էջ 161-162:

<sup>5</sup>Տե՛ս Մազմանեան Վ., Նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, 1937, № 5, մարտ, էջ 149:

1895 թ. հունիսի 8-ին ՅՅԴ Կ. Պոլսի կառույցի ղեկավար Յ. Յուսուֆյանը (Մելիք) «Դրոշակ»-ի խմբագրությանը տեղեկացնում է բուլղար-մակեդոնացի հեղափոխական-ների հետ առաջին շփման մասին և առաջարկում, որ խմբագրությունն իր կարծիքը հայտնի դրա վերաբերյալ: Նամակում մասնավորապես նշվում էր, որ բուլղար-մակեդոնական հեղափոխական կազմակերպության երկու ներկայացուցիչներ են եկել իրենց մոտ: Խոսելով նրանց նպատակների մասին՝ Յ. Յուսուֆյանը գրում է. «անոնք կ'ուզեն գործել դիմամիտով և մեր գործակցութիւնը կ'ուզեն: Մենք տակաւին բանակցութեան մէջ ենք, ... վերջնական համաձայնութիւն չտուիմք: Եթէ համաձայնիմք, պետք է միաժամանակ գործենք Պոլիս և Մակեդոնիա: Կարծես թէ պիտի համաձայնիմք և գուցէ յաջողցնենք 13-ին<sup>1</sup>: Գուցէ յաջողցնենք և գաւառական քաղաքներու մէջ ևս. գուցէ ըսեմ, որովհետեւ դժուար է: ... Անոնք կը խոստանան իրենց կողմէն ամեն տեսակ ծառայութիւններ...»<sup>2</sup>: Ի վերջո, ՅՅԴ ղեկավար մարմինները տալիս են իրենց համաձայնությունը և հայ-բուլղարական համագործակցությունը կայանում է:

Նույն թվականի հուլիսի 25-ին գրված նամակում տեղեկացնելով հայ-բուլղարական բանակցությունների ավարտի մասին՝ Յ. Յուսուֆյանն, այնուամենայնիվ, մտավախություն է հայտնում, որ այդ համագործակցությունը օգնելու փոխարեն կարող է հակառակ ազդեցությունն ունենալ. «հոս կ'ուզեն մեզի ձգել, իրենք կը խոստանան ինչքան պետք է մեզի հայթայթել (խոսքը վերաբերում է դիմամիտին՝Մ. Յ.), և կը փափաքին, որ շուտով սկսինք... հոս ինչ-որ ընենք այդ ուղղութեամբ, երկուքիս անունով պիտի ըլլայ, իսկ իրենցը՝ իրենց անունով, բայց արդեօք մի այսպիսի միացեալ գործունեութիւն մը մեր դատին արդի պայմաններու մէջ օգտակար թէ վնասակար կրնայ ըլլալ: Մենք սկզբունքով համաձայն ենք, բայց միայն կը վախնանք թէ վնասենք, փոխանակ օգնելու...»<sup>3</sup>:

1895 թ. սեպտեմբերի 9-ից հետո բուլղար-մակեդոնական հեղափոխական ուժերի հետ համագործակցությունը տալիս է առաջին ցանկալի արդյունքը: «Դրոշակ»-ի խմբագրությանը գրած նամակում Յ. Յուսուֆյանը տեղեկացնում է մակեդոնացիների տրամադրած դիմամիտի առաջին խմբաքանակի մասին: Սեպտեմբերի 21-ին ՅՅԴ բյուրոյին ներկայացնելով Կ. Պոլսում Բաբ Ալիի ցույցից հետո շարունակվող կոտորածը, նա հայտնում է, որ «վճռած ենք մակեդոնացիներու հետ ռումբ, տինամիտի դիմել...»<sup>4</sup>: Օգնությունը չի ուշանում. սեպտեմբերի 26-ի նամակում նա հայտնում է մեծ քանակությամբ ուժանակ ստանալու մասին՝ ավելացնելով, որ ևս 30 ռումբ օրեր անց կուղարկեն:

1895 թ. աշնանը ՅՅԴ բյուրոն հատուկ առաքելությամբ Բուլղարիա է ուղարկում Վարդոյին (Յակոբ Վարդ-Պատրիկյան), որը նոր էր աքսորից վերադարձել Կովկաս: Նա ներկայանում էր որպես հրեա և հանդես գալիս Իսաք Արվախ կեղծանվամբ:

<sup>1</sup> ՅՅԴ Կ. Պոլսի կառույցը որոշել էր օգոստոսի 13-ին՝ Սասունի ապստամբության տարելիցի կապակցությամբ, ցույց կամ հեղափոխական ելույթ կազմակերպել, որն ուժերի անբավարար լինելու պատճառով չիրականացվեց:

<sup>2</sup> Դիւան Յ. Յ. Դաշնակցութեան (այսուհետ՝ Դիւան...), հ. 1, Պոսթըն, 1934, էջ 238:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 240:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 246:

Վարդոն մինչև 1898 թ. ՀՀԴ Բալկանյան կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչներ<sup>1</sup>:

1895 թ. հոկտեմբերի 2 (14)-ին ՀՀԴ Կ. Պոլսի ղեկավար գործիչներից Ա. Վռամյանը «Դրոշակ»-ի խմբագրությանը գրած նամակում հայտնում է, որ բուլղար-մակեդոնացիներն առաջարկում են համատեղ գործադիր կոմիտե կազմել, որի մեջ յուրաքանչյուր կողմից ընգրկված կլինեն երկու ներկայացուցիչ, բայց մինևսյն ժամանակ հավելում է, որ «այդ մասին (կոմիտեի ստեղծման՝ Մ. Հ.) կարգադրած չենք տակալին...»<sup>2</sup>: Նա հայտնում է, որ համաձայնություն է ձեռք բերվել մակեդոնացիների հետ դրամի հանգանակության արագացման վերաբերյալ, որը հնարավորություն կընձեռե արագ և արդյունավետ զինվելու<sup>3</sup>:

1895 թ. վերջին Կ. Պոլսի դաշնակցական գործիչները փոճեցին սեփական ուժերով ռուս բարձրագույն, բայց առաջին փորձերն անհաջողության մատնվեցին: «Մենք որքան ալ կ'աշխատինք պատրաստուել, այդ շատ դժուար պիտի լինի (խոսքը վերաբերում է ռուս բարձրագույնին՝ Մ. Հ.) կարծեմ եւ գուցէ ուշացնելով՝ խնդիրը թաղենք, հետեւաբար, մենք վճռեցինք մակեդոնացիների առաջարկած 60 հատ ռուսները հոս փոխադրել եւ հոս գործածել...», - նշում է Հ. Յուսուֆյանը «Դրոշակ»-ի խմբագրությանը գրած նամակում<sup>4</sup>:

1895 թ. դեկտեմբերի վերջին բուլղար-մակեդոնական հեղափոխական ուժերի միջև ծագած ներքին պառակտումները շարունակվեցին նաև հետագայում<sup>5</sup>: Թեև դեկտեմբերի 31-ին Հ. Յուսուֆյանին գրած նամակում մակեդոնացի գործիչները վստահեցնում էին, որ «դուք վախենալու բան չունիք այս անջատումից: Մենք պարկեշտորեն կը կատարենք մեր յանձնառութիւնը, մեր խոստումը ձեր հանդէպ...»<sup>5</sup>, այնուամենայնիվ վերը նշված հակասություններն առանձին դեպքերում բացասական ազդեցություն էին թողնում հայ-բուլղարական հարաբերությունների բնականոն զարգացման վրա:

Այսպիսով, հայ-բուլղարական համագործակցության առաջին փուլը սահմանափակվեց միայն բուլղարացիների կողմից հայ ազատագրական ուժերին ռազմամթերքի տրամադրմամբ (ռուս, ուսմանակ և այլն) և Կ. Պոլսում դրա կիրառմամբ (Օսմանյան դրամատան գրավում, Սամաթիայի կռիվներ և այլն): Բացի այդ, համագործակցությունը կրում էր տեղային բնույթ և հիմնականում սահմանափակվում էր Ռուսչուկ, Յամբուլ, Բուրգաս քաղաքների հեղափոխականների հետ հարաբերություններով:

1896 թ. փետրվարի սկզբին Ա. Վռամյանը «Դրոշակ»-ի խմբագրությանը հայտնում է. «Եամբ. (Յամբուլ՝ Մ. Հ.) ըսեր են թէ իրենք զբաղուած են հիմա հայդուկ պատ-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 221:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 253:

<sup>5</sup> Պաշտոնապես ճանաչված Մակեդոնական Բարձր. կոմիտեն ստեղծվել էր նախկին կառավարության կողմից, իսկ Մակեդոնական Կենտրոնական կոմիտեն գործում էր գաղտնի: Նախնական պայմանավորվածության համաձայն առաջինը պետք է գործեր միայն Բուլղարիայում, իսկ երկրորդը՝ Մակեդոնիայում: Մակեդոնական Կենտրոնական կոմիտեն ըմբոստացել էր և ցանկանում էր անկախ գործել նաև Բուլղարիայում:

<sup>5</sup> Նույն տեղում:

րաստելով, ուստի չեն կարող իրենց ուժը կեդրոնացնել մեր խնդրի վրայ...»<sup>1</sup>: Յամբոլ քաղաքի հեղափոխականների հետ համաձայնություն ձեռք բերելը կարևոր նշանակություն ուներ, քանի որ այդ ուղեգծով զենքերի տեղափոխումը դեպի գավառներ և Կ. Պոլիս ավելի դյուրին էր: Արդեն փետրվարի 10 (22)-ին Ա. Վռամյանը հայտնում է, որ Յամբոլի ուժերի հետ համաձայնությունը կայացել է: Նամակագրությունից պարզ է դառնում, թե հայ հեղափոխականների կողմից որ զինատեսակներն են առավել պահանջված եղել. «մեր ուզածը հրացան է եւ ոչ ռեվ. (խոսքը վերաբերում է ռևոլվեր տեսակի ատրճանակին - Մ.Յ.), ուստի այս վերջինն է չգնեք... առանց ժամանակ կորսցնելու աճապարեցեք գնելու հրացան (մարթին կամ լըբել) դուք գնել նայեցեք, մենք դրամ կը հասցնենք»<sup>2</sup>:

1896 թ. սկսած՝ ռումբեր պատրաստում են նաև Կ. Պոլսի հայ հեղափոխականները: Չնայած դրան՝ բուլղար-մակեդոնացի հեղափոխականների հետ համագործակցությունն այս ոլորտում շարունակվում է նաև հետագա տարիներին: 1896 թ. ապրիլի 3 (15)-ին հերթական անգամ անդրադառնալով ռումբերի ձեռք բերման և փոխադրման խնդիրներին՝ Ա. Վռամյանը «Դրոշակ»-ի խմբագրությանը հայտնում է. «...մեր կողմն է ձեռնարկած ենք հոս պատրաստելու. նմուշ մը ունիւք մեր ձեռքին, շատ յաջող է, բայց դեռ չենք փորձած: Փորձելն վերջ պիտի կարողանանք ունենալ որքան եւ ուզենանք...»<sup>3</sup>: Նախատեսված էր, որ դրանք առաջին հերթին պետք է ուղարկվեին Տրապիզոն, քանզի այնտեղի ներկայացուցիչները նախապես հոգացել էին ճանապարհի անվտանգության ապահովումը: Վառողը, որն անհրաժեշտ էր ռումբեր պատրաստելու համար, տրամադրվում էր Ռոդոսթո քաղաքից:

Բուլղար-մակեդոնացի հեղափոխականների հետ ՅՅԴ-ի համագործակցության աշխուժացում նկատվեց 1898 թ.-ին Ռոստոմի՝ Ֆիլիպետում հաստատվելուց հետո: Նա այստեղ առաջին տեսակցությունն ունեցավ բուլղար-մակեդոնացի հեղափոխական գործիչ Լյապովի հետ: Մայիսի 1-ին կայանալու էր մակեդոնական կազմակերպության կոնգրեսի նիստը, որի քննարկման հիմնական թեման Հաագայի խաղաղության կոնֆերանսին հուշագիր ներկայացնելն էր: Կոնգրեսին մասնակցելու հրավեր էր ստացել նաև Ռոստոմը: Նա պետք է հանդես գար բուլղար հեղափոխականների հետ մոտակա ամիսներին Կ. Պոլսում համատեղ միջոցառում իրականացնելու առաջարկով<sup>4</sup>: Բացի այդ, մտադրություն կար խաղաղության առաջիկա կոնֆերանսում համատեղ հուշագիր ներկայացնել հայկական և մակեդոնական հարցերի վերաբերյալ: Բայց այդ մտադրությունը մակեդոնացի գործիչների կողմից միանշանակ չընդունվեց, քանի որ նրանցից ոմանք կարծում էին, որ «դա կարող է գրգռել Ռուսաստանը մակեդոնական հարցի դեմ»<sup>5</sup>:

Որոշ ժամանակ անց ՅՅԴ Արևմտյան բյուրոյին գրած նամակում Ռոստոմը նշում է, որ մակեդոնական կոմիտեն, ի վերջո, վճռել է հայ-մակեդոնական միացյալ հուշագիր ներկայացնել և դրանով իսկ իրազեկել եվրոպական հասարակությանը երկու ժո-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 274:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 333:

<sup>4</sup> Տե՛ս Ռոստոմ, Նամականի, մահուան ութսուն ամեակին առթիւ, խմբ. Յ. Տասնապետեան, Պեյրուք, 1999, էջ 151:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 158:

ղովուրդների դատի մասին<sup>1</sup>: Բուլղարիայում Ռոստոմն առաջին հերթին մեծ աշխատանք կատարեց գաղափարակից ընկերներին իր շուրջը համախմբելու, Բուրգասում զենքերի ապօրինի յուրացման խնդիրը բացահայտելու համար: Այդ նպատակով նա երկու անգամ շրջեց Բուլղարիայի հայաշատ քաղաքներով և քայլեր ձեռնարկեց բուլղար-մակեդոնական հեղափոխական ուժերի հետ սերտ հարաբերություններ հաստատելու համար: Ձեռք բերվեց բուլղարական կառավարության համաձայնությունը՝ զինավարժական կայաններ ստեղծելու վերաբերյալ:

Բուլղարահայության, ինչպես նաև տեղացիների դրական վերաբերմունքը ՀՅԴ կառույցի նկատմամբ մեծացավ, երբ Ռոստոմի և Նրա կնոջ ջանքերով բացվեցին դաշնակցական լսարաններ՝ աղջիկների, կանանց, երիտասարդների առաձին բաժիններով, երգի, թատերական խմբակներ, որոնց հայերից բացի հաճախում էին նաև բուլղարներ: Կարևոր ձեռքբերումներից մեկը զինավարժական-մարմնամարզական կամ նշանառության խմբերի ձևավորումն էր<sup>2</sup>: Դրանցում բուլղարացի սպաների գլխավորությամբ հայերը ազատ զբաղվում էին զինավարժությամբ՝ քանի դեռ կառավարությունը չէր արգելում<sup>3</sup>:

ՀՅԴ Բալկանյան կառույցի և տեղական հեղափոխական ուժերի համագործակցության շնորհիվ Ֆիլիպեում հիմնվեց մասնավոր վարժարան, որը կարճ ժամանակ անց ձեռք բերեց մեծ թվով համակիրներ և սովորացավ դաշնակցական երիտասարդներով: «Մենք ունեցանք ... վարժարան մը, որ մեզի հետ կապեց բազմաթիւ ընտանիքներ, շահացուց բազմաթիւ համակիրներ եւ ծառայեց մեր ազդեցութիւնը զօրացնելու...»,- գրված է ՀՅԴ ընդհանուր ժողովին Բալկանյան ԿԿ-ի ներկայացրած տեղեկագրում<sup>4</sup>:

Ռոստոմը մակեդոնացի գործիչների աջակցությամբ կատարելագործեց պայթուցիկ կյուրթերի պատրաստումը: Հետագայում այդ գործում նրան փոխարինեց Քրիստափոր Միքայելյանը:

Բուլղար-մակեդոնական քաղաքական ուժերի հետ ՀՅԴ համագործակցությունը ամրապնդվեց 1900 թ., որը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Ազատագրական պայքարի արդյունավետությունը մեծապես կախված էր դրամական միջոցների առկայությունից: Դա գիտակցում էին թե՛ հայ, թե՛ բուլղար գործիչները: Խնդրի լուծման տարբերակ էր բռնի հանգանակությունը, որում մակեդոնացիները հմտացած էին: Ելնելով դրանից՝ Ռոստոմը առաջնային էր համարում նրանց հետ համագործակցելը: Այդ կապակցությամբ նա գրում է. «Մակեդոնացիները այստեղ համարեա թէ բռնի ուժով դրամ են ժողովում եւ բաւական խոշոր գումարներ: Առնում են ոչ միայն բուլղարներից, այլ եւ հրեանեից, նոյն իսկ տաճիկներից: Հայերին չեն դիմում մեր խաթեր, այն հաւատով, թէ հայերը մեզ տալիս են: Հիմա, ասում եմ, սկսեմք հան-

<sup>1</sup> Համատեղ հուշագիր ներկայացվեց նաև Հաագայի խաղաղության երկրորդ կոնֆերանսին (1907 թ.), տե՛ս Վարանդեան Մ., Գ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 217, մանրամասն տե՛ս «Դրօշակ», 1907, № 8, օգոստոս, էջ 107-117:

<sup>2</sup> Չինավարժական-մարմնամարզական խմբերի ստեղծման որոշումը հաստատվել էր ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովում, որի հիմնական նպատակը տեղական տարրի մեջ հեղափոխական կռվող ուժերի պատրաստումը և անհրաժեշտության դեպքում դրանք Երկիր ուղարկելն էր:

<sup>3</sup> Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ-բուլղարական զինական համագործակցությունը..., Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան, գիտաժողովի զեկույցների ժողովածու, էջ 38:

<sup>4</sup> Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետ՝ Նիւթեր...), Բ. հատոր, խմբ. Հ. Տասնապետեան, Պեյրուբ, 1985, էջ 154:

զանակութեան, ով որ մեզ տայ՝ լաւ. ով չտայ, նրանց ցանկը կը պատրաստենք եւ կը յանձնենք մակեդոնացիներին...»<sup>1</sup>:

1900 թ. ապրիլի 12-ին ՅՅԴ Արևմտյան բյուրոյին գրած նամակում Ռոստոմը հայտնում է համատեղ բռնի հանգանակություն կազմակերպելու առաջին փորձի մասին: Վեց հոգուց բաղկացած (3 հայ, 3 բուլղար-մակեդոնացի) հայդուկային խումբը 1900 թ. հունիս-հուլիսին անցնում է Օսմանյան կայսրության տարածք և անթերի կատարում առաջադրանքը: Ձեռք բերված 13000 ֆրանկը (10.650 բուլղարական լև) ծառայում է Կ. Պոլսի ՅՅԴ-ի կառույցի ընդհանուր կարիքները հոգալուն<sup>2</sup>:

Հայ-մակեդոնական զինակցությունը, ցավոք, ունեցավ նաև տխուր էջեր: Դրանց շարքին է դասվում 1901 թ. ամռանը Ադրիանապոլսի մոտակայքում «խաղաղ» միջոցով դրամ ձեռք բերելու փորձը: Հայ և բուլղար-մակեդոնական 10-12 հայդուկներից բաղկացած խումբը պետք է մոտակա ագարակներից մեկից առևանգեր Ադրիանապոլսի վալիին, որը հյուր էր եկել: Բայց հարձակման պահին նա արդեն հեռացել էր և խումբը ստիպված առևանգեց ագարակի տիրոջ որդուն<sup>3</sup>: Իշխանությունները հայդուկային փոքրիկ խմբի դեմ դուրս բերեցին 1500-անոց զորք: Ընդհարման ժամանակ հայդուկներից վեցը սպանվեցին, չորսը՝ գերի ընկան: Այս կռվից հետո թուրքական կառավարությունը քայլեր ձեռնարկեց հայ-բուլղարական հարաբերություններն արմատախիլ անելու համար: Ադրիանապոլսի չորս հրապարակներում «մահու անարգ սիւներ» տնկվեցին և մահապատժի ենթարկվեցին Պետրոս Սերեմճյանը\*, Օսնիկ Թորոսյանը, Սվետոսլավ Մերջանովը և Իլինը: Թուրքական իշխանություններին չհաջողվեց հասնել իրենց նպատակին, քանզի, ինչպես Մ. Վարանդյանն է վկայում. «Ադրիանապոլսյ կախաղանները... նոր զարկ տւին երկու ժողովուրդներու փոխադարձ ջերմ զգացումներուն»<sup>4</sup>: Կախաղանի լուրը ցնցեց հայ և բուլղար ժողովուրդներին: Կազմակերպվեցին հոգեհանգստի արարողություններ, թուրքական հյուպատոսարանի առջև ցույցեր և այլն: Ֆիլիպեում գործող խմբերը կրկնապատկվեցին, ՅՅԴ շարքեր ընդգրկվեցին նույնիսկ նրանք, ովքեր կռվել էին Պետոյի և նրա ընկերների դեմ:

1902 թ. հուլիսին «Դրոշակ»-ի խմբագրությանը գրած նամակներում Ռոստոմը վստահեցնում է, որ չնայած դժվարություններին՝ հանգանակությունները շարունակվում են: Բուլղարահայ հարուստները հաճախ ինքնակամ հանդես էին գալիս նվիրատվություններով՝ դրանով ցույց տալով իրենց դրական կեցվածքը հայ հեղափոխականների նկատմամբ<sup>5</sup>:

Ֆիլիպեում 1902 թ. դրությամբ գործում էին յոթ արական և երկու իգական խմբեր: Բուլղար հասարակայնության շրջանում մեծ ժողովրդականություն էին վայելում ՅՅԴ-ի տնօրինած Գթասիրաց եղբայրության ընթերցարանը, Աղքատախնամ ընկերությունը և այլն<sup>6</sup>:

<sup>1</sup> Ռոստոմ, նշվ. աշխ., էջ 220:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 208:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 256:

\*Խանասարի արշավանքի մասնակից Բուլղարացի Պետոն (Պետրոս Սերեմճյան): Նա ավարտել էր Սոֆիայի զինվորական ուսումնարանը և ստացել բուլղարական բանակի սպայական աստիճան:

<sup>4</sup> Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 218:

<sup>5</sup> Տե՛ս Ռոստոմ, նշվ. աշխ., էջ 278-281:

<sup>6</sup> Տե՛ս Լիւթեր..., Բ. հատոր, էջ 156:

Բուլղար-մակեդոնական կառույցների հետ համագործակցության մանրամասները քննարկվեցին ԶՅԴ երրորդ ընդհանուր ժողովում (1904 թ., Սոֆիա), որտեղ համատեղ ապստամբական շարժում սկսելու հարց բարձրացվեց: Թուրքական կառավարությունը նախապատրաստություններ էր տեսնում Սասունի վրա հարձակվելու: Բացի այդ գարնանը վերսկսվելու էր մակեդոնական շարժումը: Զաղաքական նպաստավոր իրավիճակի դեպքում հնարավոր կլիներ մակեդոնական հարցի հետ մեկտեղ դիվանագիտության ուշադրությունը սևեռել Զայկական հարցի վրա\*: Բացի այդ, միաժամանակյա ապստամբությունը կմասնատեր թուրքական զինական ուժը<sup>1</sup>:

Ընդհանուր ժողովը վերահաստատեց սուլթանին ահաբեկելու նախկինում կայացված որոշումը: Այդ ձեռնարկի համար անհրաժեշտ զինամթերքը փոխադրվելու էր Բուլղարիայից: Բացի այդ, հայ հեղափոխականները, օգտվելով բուլղարական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից, սուլթանի համար նախատեսված ձեռնառամբերի փորձարկումները կատարում էին Բուլղարիայում: Ցավոք, նման փորձարկումներից մեկը 1905 թ. մարտին ավարտվեց ԶՅԴ առաջնորդ Զ. Միքայելյանի և Նրա զինակից Վ. Զենդիրյանի զոհվելով: Այդ դեպքը մեծ արձագանք ունեցավ բուլղար-մակեդոնական միջավայրում: Մ. Վարանդյանի վկայությամբ այն ցուցադրեց. «եղբայրութիւն մը՝ որու շքեղ, աննախընթաց տեսարանը պարզեց մայրաքաղաք Սոֆիան մեր Զրիստափորի և Վռամի թաղման օրը»<sup>2</sup>:

Համակարգված աշխատանքի շնորհիվ բուլղար-մակեդոնական կառույցների հետ ԶՅԴ-ի համագործակցությունը աշխուժացրեց կուսակցության բալկանյան կառույցը: Բորիս Սարաֆովի, վարչապետ Պետկովի, գեներալ Սավովի (որը հետագայում դարձավ Բուլղարիայի դեսպանը Փարիզում), Լյապովի, Մինկովի, Թյուֆեկչիևի, հրապարակախոս Ռադևի (Բուլղարիայի դեսպանը Վաշինգտոնում), Գենադիևի և այլ գործիչների հետ շփման արդյունքում բարենպաստ միջավայր ստեղծվեց Բուլղարիայում ԶՅԴ-ի գործունեության հետագա ծավալման համար<sup>3</sup>: «Պուլղարիոյ կառավարութիւնը ոչ միայն բարեացակամ վերաբերում ունէր հայ յեղափոխականներու գործունեութեան հանդէպ երկրի մէջ ընդդէմ Թուրքիոյ,-գրում է Վ. Մազմանյանը,- այլ եւ ուղղակի եւ անուղղակի կերպով թանկագին օժանդակութիւն կ'ընէր անոնց...»<sup>4</sup>:

Բուլղարական կառավարության դրական վերաբերմունքը հայ հեղափոխականների հանդեպ դրսևորվեց հատկապես Աբդուլ Համիդի մահափորձին նախորդած ամիսներին, երբ ռումբ տեղափոխող դաշնակցական երիտասարդներ (Սարգիս Բարսեղյան, Համբարձում Աղաջանյան և ուրիշներ) 1904 թ. Վառնայում ձերբակալվեցին և արտաքսվեցին Սերբիա, բուլղարական կողմը ինքը հուշեց, որ նրանք կարող են այլ անվան ներքո վերադառնալ: Բերենք մեկ այլ օրինակ: Երբ 1905 թ. Սոֆիայի

\*Ընդհանուր ժողովում վերոնշյալ խնդրի շուրջ տարբեր կարծիքներ հնչեցին: Ներկաներից ոմանք կարծում էին, որ միաժամանակյա ապստամբություն սկսելը կբաժաներ թուրքական զինական ուժը: Ուրիշները պնդում էին, որ հավաստի տեղեկություններ չկան, թե կառավարությունը հենց գարնանը կսկսի հարձակումը: Կար նաև մտավախություն, որ քաղաքական իրավիճակից դրդված՝ մակեդոնացիները կարող էին փոխել պայքարի մարտավարությունը: Մի մասն էլ գտնում էր, որ համատեղ ապստամբության արդյունքում դիվանագիտական սեղանին կարող էր դրվել միայն Մակեդոնական հարցը, իսկ Զայկականը պարզապես կչրջանցվեր:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 110:

<sup>2</sup> Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 218:

<sup>3</sup> Տե՛ս Նիւթեր..., Բ. հատոր, էջ 96:

<sup>4</sup> Մազմանեան Վ., նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, 1937, № 5, մարտ, էջ 152:



մտակայքում ձեռնառումներ փորձարկելիս զոհվեցին Զ. Միքայելյանը և Վ. Քենդիրյանը, իշխանությունները կարող էին ձեռքակալել նրանց հետ եղած ևս 12 անձի: Բայց դա չարեցին, իսկ Զ. Միքայելյանի զբաղեցրած հյուրանոցի համարը ոստիկանները խուզարկեցին միայն այն ժամանակ, երբ վաղօրոք այնտեղից դուրս էին բերվել բոլոր վտանգավոր փաստաթղթերը<sup>1</sup>:

Դեռևս 1905 թ. մարտին Ռոստոմի առաջարկով Անդրանիկը\* ժնկից մեկնեց Բուլղարիա: Այնտեղ ևս մի շարք տեսակցություններ ունեցավ բուլղար և մակեդոնացի գործիչների հետ<sup>2</sup>: ՀՀԴ Արևմտյան բյուրոյին գրած նամակում Անդրանիկը հանգամանորեն բացատրում էր, որ իր Կովկաս մեկնելու ձգձգումը պայմանավորված է նրանով, որ «մեզմե անկախաբար Սարաֆոֆ եւ մակեդոնացի բարեկամներէն ոմանք մտածումն յղացած են տեսակցիլ պուլկար կառավարութեան բարձրագոյն շրջանակներու հետ եւ խորհրդակցիլ թէ ինչ միջոցներով կարելի է հայ եւ մակեդոնական յեղափոխութիւնը գործնական ու շոշափելի համերաշխութեան (համագործակցության՝ Մ. Յ.) մը մէջ դնել...»<sup>3</sup>: Անդրանիկի՝ Բուլղարիա ժամանելուց հետո նրա այցի մասին Լյապովը տեղեկացնում է գինվորական նախարար գեներալ Սազոնովին: Այդ մասին Անդրանիկը գրում է. «գեներալը մասնաւոր հրաւերով փափաք կը յայտնէ անձամբ տեսակցութիւն մը ունենալ ինձի հետ,... կընդունիմ մայիսի 30-ին գիշերը՝ ընկերակցութեամբ Լիաքոֆի եւ Պալք. Կեդր. Կոմիտէի անդամներէն ընկեր Երուանդ Ալաճաճեանի՝ կը ներկայանամ իրեն»<sup>4</sup>: Հանդիպման ժամանակ արծարծված թեմաները սպառազինության խնդիրները և հեղափոխական միջոցառումներն էին: Անդրանիկը ներկայացնում է ռազմամթերքի փոխադրման գործում առկա արգելքները (մաքսային, քաղաքական և այլն): Նախարարը խոստանում է արտասահմանից, այդ թվում Վիեննայից, ստացվող զենքերը Բուլղարիա տեղափոխել առանց մաքսի, այնուհետև՝ ազատորեն (իբրև Մակեդոնիայի ազատագրության համար նախատեսված զենքեր) հասցնել նախատեսված նավահանգիստները:

Իր հերթին, հայկական կողմը խոստանում էր թուրք-բուլղարական պատերազմի դեպքում ապստամբություն բարձրացնել երկրում: Հանդիպման ժամանակ գեներալ Սազոնովը խոստանում է զենքին ավելի լավ տիրապետելու համար 400 հայ երիտասարդների թույլատրել ծառայելու բուլղարական բանակում<sup>5</sup>: Միաժամանակ 20 հայ երիտասարդների (նրանց թվում էր Գարեգին Նժդեհը) հնարավորություն ընձեռվեց անվճար կրթություն ստանալ Բուլղարիայի Կնյաժևո արվարձանում գտնվող սպայական վարժարանում<sup>6</sup>:

Սազոնովի հետ հանդիպման ժամանակ քննարկվում է ապագա համագործակցության մի տարբերակ, որի գործնական կիրառումը թերևս տեսնում ենք Բալկանյան 1-ին պատերազմի ժամանակ: Թուրքիայի դեմ պատերազմի դեպքում Բուլղարի-

<sup>1</sup>Տե՛ս Նիւթեր..., Բ. հատոր, էջ 335:

\* Անդրանիկը, զենք ձեռք բերելու նպատակով, Ռոստոմի հանձնարարությամբ նախ մեկնեց Փարիզ, ապա՝ Նույն նպատակով ժամանեց Բուլղարիա: Այստեղ նրան վիճակված էր ստանձնել ՀՀԴ Չինվորական դպրոցի կազմակերպման գործը:

<sup>2</sup>Նույն տեղում, Դ. հատոր, խմբ. Հ. Տասնապետեան, Պեյրութ, 1982, էջ 132:

<sup>3</sup>Նույն տեղում, Ե. հատոր, խմբ. Ե. Փամբուկեան, Պեյրութ, 2007, էջ 369:

<sup>4</sup>Նույն տեղում:

<sup>5</sup>Նույն տեղում, Գ. հատոր, խմբ. Հ. Տասնապետեան, Պեյրութ, 2007 էջ 60:

<sup>6</sup>Նույն տեղում, տե՛ս Լևոն Սիմոնյան Հր., Հայ ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երևան, 2003, էջ 494:

այի Չինվորական նախարարությունը պատրաստ էր սպառազինել 10.000 հոգուց բաղկացած հայ և բուլղար խառը բանակ, որը դրվելու էր Անդրանիկի հրամանատարության ներքո և առաջադրանք էր ունենալու գրավել Սև ծովի թուրքական նավահանգիստները<sup>1</sup>:

Այսպիսով, հայ-բուլղարական համագործակցության խորացումը երկու կողմերի համար էլ շահավետ էր համարվում: Բուլղարական կառավարության կողմից հայ հեղափոխականներին արտոնությունների տրամադրումը բխում էր Բուլղարիայի պետական շահերից: Բուլղարական կողմի կարծիքով թուրք-բուլղարական պատերազմը կարող էր սկսվել երկու կամ երեք տարի հետո: Յետևաբար, հայ հեղափոխականների հետ համագործակցությունը կարևոր գործոն էր հանդիսանալու Թուրքիայի դեմ պայքարում: Հայկական կողմի համար համագործակցությունը շահավետ էր ինչպես զինական փորձի փոխանակման, այնպես էլ զենք ու զինամթերք ձեռք բերելու և փոխադրելու հարցերում դյուրություններ ստանալու առումներով:

Հայ-բուլղարական համագործակցության հաջողված գործերից մեկը ՀՀԴ-ի Չինվորական գաղտնի դպրոցի հիմնումն էր: Վերջինիս ստեղծման գաղափարը ծագել էր դեռևս 1905-1906 թթ. գումարված ՀՀԴ Բալկանյան կոմիտեների շրջանային ժողովում: Դպրոցը հիմնվում է Բորիս Սարաֆովի աջակցությամբ Բուլղարիայի Դուբնիցա շրջանում՝ Ռիլայի վանքում, որը գտնվում էր թուրք-բուլղարական սահմանի մոտ: Չնայած իր կարճատև գոյությանը (1906 թ. նոյեմբեր-1907 թ. հունիս)՝ ՀՀԴ Չինվորական դպրոցը սովեց ռազմական արվեստի մեջ հմտացած շուրջ հիսուն շրջանավարտ: Չինվորական դպրոցի ֆինանսավորումը հոգալու էին ՀՀԴ Բալկանյան և Ամերիկյան կենտր. կոմիտեները<sup>2</sup>: Մեկ տարվա հատկացումների չափը կազմում էր 50 հազար ֆրանկ (50 աշակերտներից յուրաքանչյուրի համար սահմանված էր ամսական 100 ֆրանկ, հետևաբար 10 ամսում այն կազմում էր 50 հազար ֆրանկ)<sup>3</sup>: Թեև ՀՀԴ Արևմտյան բյուրոն խոստացել էր զգալի գումար հատկացնել, բայց տրամադրեց ընդամենը 2 հազար ֆրանկ, իսկ Արևելյան բյուրոն ընդհանրապես հրաժարվեց օժանդակել: Դպրոցի բյուջեի տնօրինումը ստանձնեց խառը հանձնաժողովը, որի մեջ ընդգրկվել էին Անդրանիկը, ՀՀԴ Բալկանյան կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Եր. Ալաջաջյանը, ԱՄՆ կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Թ. Ջելայանը (Հայկ Արմեն)<sup>4</sup>:

Չինվորական դպրոցն առաջնորդվում էր բուլղարական սպայական վարժարանի ծրագրով, բայց հարմարեցված էր նաև հայ իրականությանը բնորոշ պայմաններին<sup>5</sup>: Դպրոց կարող էին ընդունվել 20-35 տարեկան երիտասարդները, ովքեր չունեին առողջական խնդիրներ: Ունկնդիրները պարտավոր էին ենթարկվել հրահանգներին և պահպանել կատարյալ կարգապահություն և այլն<sup>6</sup>: Թուրքական կողմի կասկածներից խուսափելու համար կառավարությունն արտոնեց, որ ունկնդիրները կրեն բուլղարական բանակի զինվորական համազգեստ<sup>7</sup>: Դպրոցում դասավանդում էին

<sup>1</sup> Նույն տեղում, Ե. հատոր, էջ 370:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 378:

<sup>3</sup> Տե՛ս Սիմոնյան Հր., նշվ. աշխ., գիրք II, էջ 497:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 498:

<sup>5</sup> Տե՛ս Նիկթեր..., Ե. հատոր, էջ 374:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 375:

<sup>7</sup> Տե՛ս Սիմոնյան Հր., նշվ. աշխ., գիրք II, էջ 497:

հետևյալ առարկաները՝ զինվորական հետախուզություն, ռազմավարություն, թնդա-  
նորթագություն, ակնաային ծառայություն, պայթուցիկ նյութերի պատրաստում,  
Յայոց պատմություն և այլն<sup>1</sup>: Ցանկալի էր համարվում բուլղարերենի իմացությունը,  
բայց ունկնդիրների մեծամասնությունը բուլղարերեն նույնիսկ գրել-կարդալ չգիտեր<sup>2</sup>:  
Պարապմունքերը շարունակվելու էին մինչև սեպտեմբեր: Ծրագրված էր, որ մայիս  
ամսից հետո ասները գործնական պարապմունքներն անցկացնելու էին լեռներում<sup>3</sup>:

Պողոս Պողոսյանը, որը բուլղարական բանակի հարյուրապետ էր, 1906 թ. դեկ-  
տեմբերի 5-ին ժամանեց Ռիլայի վանք և նշանակվեց Չինվորական վարժարանի  
տնօրեն: Կարճ ժամանակ անց վարժարանի դասավանդման գործընթացի մեջ  
ներգրավվեց նաև Բուլղարիայի սպայական դպրոցի շրջանավարտ Գարեգին Նժդե-  
հը<sup>4</sup>: Չինվորական դպրոցը, սակայն, չկարողացավ երկարատև բնականոն գործու-  
նեություն ծավալել: Թուրք և ռուս լրտեսները, ի վերջո, հայտնաբերում են այն: Թե՛  
ռուսական, թե՛ թուրքական իշխանությունները դպրոցը փակելու պահանջով դիմե-  
ցին բուլղարական կառավարությանը: Ռուսական իշխանություններն ամեն կերպ  
փորձում էին խաթարել դպրոցի բնականոն աշխատանքը, քանի որ, ինչպես կարծում  
էր Բալկաններում ռուսական գործակալությունը վարող Օդեսայի բաժանմունքի  
պետը, դպրոցի շրջանավարտները պատրաստ են դառնալու «ապստամբական հրո-  
սակախմբերի ղեկավարներ»<sup>5</sup>:

Բուլղարական կառավարությունը փորձում էր շեղել թուրքական կողմի ուշադրու-  
թյունը: Նախապես հրահանգելով կտուրներում և ներքնահարկերում թաքցնել  
կասկածելի թվացող իրերը՝ բուլղարական իշխանությունները ձևականորեն խուզար-  
կեցին դպրոցը: 1907 թ. փետրվարի 26-ի խուզարկության ընթացքում 34 հոգի  
ստիպված եղան թաքնվել մոտակա անտառում: Դպրոցի 10-15 ասներ ձերբակալվե-  
ցին, որպես «մակեդոնացի հեղափոխականներ», որոնք կարճ ժամանակ անց ազատ  
արձակվեցին:

Թեև բուլղարական բանակի հրամանատարության պահանջով 1907 թ. մարտի  
24-ին Չինվորական դպրոցը փակվեց, բայց չդադարեցրեց իր գործունեությունը:  
Սաները տեղափոխվեցին թուրքական սահմանից հեռու գտնվող Ռոդոմետի շրջանի  
Փելովա վանքը\*։ ՅՅԴ Չինվորական գաղտնի դպրոցը շարունակում է գործել ևս  
երկու ամիս և փակվում է քաղաքական ու ֆինանսական անբարենպաստ պայման-  
ների պատճառով: Դպրոցի հիմնական գույքը և սննդամթերքի պաշարները մնացին  
Ռելա վանքի կալվածքում: Դպրոցի ղեկավարներից Ռաշիդը համագործակցելով մա-  
կեդոնական կազմակերպության աջ թևի ներկայացուցիչ Վանդո Միահիլովի հետ՝  
ամբողջ գույքը և սննդամթերքը վաճառում է նրան և անհետանում<sup>6</sup>: ՅՅԴ-ի Սոֆիայի  
կազմակերպությունը վճիռ է կայացնում ահաբեկել Ռաշիդին, բայց նրան գտնելու  
փնտրտուքները ապարդյուն են անցնում<sup>7</sup>:

<sup>1</sup>Տե՛ս Նիւթեր..., Բ. հատոր, էջ 333:

<sup>2</sup>Տե՛ս Միլասեան Մ., Մատթէոսի յուշատետրէն, «Յայրենիք» ամսագիր, 1958, № 7, հուլիս, էջ 68:

<sup>3</sup>Տե՛ս Նիւթեր..., Գ. հատոր, էջ 60:

<sup>4</sup>Վրդ մասին տե՛ս նույն տեղում, Ե. հատոր, էջ 377, տե՛ս նաև Սիմոնյան Յր., նշվ. աշխ., գիրք II, էջ 498:

<sup>5</sup>Նույն տեղում, էջ 500:

\*Տեղափոխությունը սկսվեց մարտի 27-ին և ավարտվեց ապրիլի 9-ին:

<sup>6</sup>Տե՛ս Ռոստոմ, նշվ. աշխ., էջ 414:

<sup>7</sup>Տե՛ս Սիմոնյան Յր., նշվ. աշխ., գիրք II, էջ 502:

Վարժարանը կարճատև գոյության ընթացքում զգալի հաջողություններ է գրանցում: Նրա շրջանավարտներն անմիջապես ընդգրկվում են հայ ազատագրական պայքարի մեջ՝ անցնելով Կովկաս, Իզմիր, Կիլիկիա, Պարսկաստան և այլուր<sup>1</sup>: Նրանցից մի քանիսին վիճակված էր մեծ դեր ունենալ հայոց ազատամարտի պատմության մեջ, ինչպես Գարեգին Նժդեհը, Թուրցիկ Գևորգը, Մատթեոսը, խմբապետ Խորենը և այլք:

Այսպիսով, 1895-1907 թթ. հայ-բուլղարական զինակցությամբ հայ ազատագրական զինված պայքարը թևակոխեց որակական նոր փուլ: Այս շրջանում հայ հեղափոխականների առաջնային խնդիրը արևմտահայության զինումն էր: Չենք ձեռք բերելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու տեսանկյունից անգնահատելի էր բուլղար-մակեդոնացի հեղափոխականների ցուցաբերած աջակցությունը: Երկու ժողովուրդների ազատագրական ուժերի համագործակցության լավագույն օրինակ հանդիսացավ Չինվորական գաղտնի դպրոցի սաների ունեցած մեծ դերակատարումը բուլղար ժողովրդի ճակատագրում: Նրանցից շատերը ընդգրկվում են Գ. Նժդեհի և Անդրանիկի հրամանատարությամբ գործող հայկական վաշտում և մասնակցում Բալկանյան 1-ին պատերազմին:

**Мариам Акопян, Сотрудничество армяно-болгарских революционных сил в конце XIX века и в начале XX века,** – В истории Армянской освободительной борьбы особый след оставило революционное содружество армян и болгар-македонцев, которое было основано в 1895 году. Не имея настоящих союзников в ближайшем окружении непосредственных соседей на армянском суде теплыми защитниками стали революционеры болгары-македонцы. Болгария для армянских революционеров стала не только приобретенным важным местом революционно-организационных работ, оружия и оружейного арсенала, материальных средств, но и стала кузницей подготовки военных кадров для армянского освободительного движения.

**Mariam Hakobyan- The Cooperation of Armenian and Bulgarian Revolutionary Forces at the End of XIX and at the beginning of XX century,** – Armenian and Bulgarian-Macedonian revolutionaries' cooperation, which began in 1895, left a significant spot in the history of Armenian struggle for freedom. Not having a real ally among the closest neighbours, the forces of Armenian struggle for freedom, namely Bulgarian-Macedonian revolutionaries, had warm supporters of the Armenian issue. Bugaria became not only an important place for weapons and hardware and financial means but also a place for preparing military specialists for the Armenian struggle.

**Մարիամ Հակոբյան-** Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի մագիստրոս:



<sup>1</sup>Տե՛ս Նիվթեր..., Ե. հատոր, էջ 379:  
338